այն կռոի մէջ կտրեց: — Նա ցոյց տոեց մեր մօտ նստած ալեւոր քահանայի վրայ:

Անցաւ Օհոյի եզը: Խան-Մահմուդի կռոի պատմութիւնը ընդհատոեցաւ:

— Օհոյի եզը ինչո՞ւ այդպէս լղար է, հիւա՞նդ է, ի՞նչ է, — հարցրեց ռեսը:

— Հիւանդ է, — պատասխանեցին նրան:

— Խեղճ մարդ, աստծոյ փորձանքից չէ ազատւում այդ մարդը, — ասաց ռեսը դառնալով դէպի մեզ: — Այս տարի նրա եզներից երկուսը բարձր ժայռից գլորոեցան, եւ ոչ մէկը կենդանի չմնաց. այդ մէկն էլ հիւանդ է, հիմա նրա արօրը բոլորովին անգործ մնացած կը լինի:

Այդ ցաւակցական խօսքերից յետոյ ռեսը հրամայեց, որ առաւօտեան իր եզներից երկուսը տան Օհոյին, առ ժամանակ բանացնէ, մինչեւ նրա եզը առողջանայ, որպէսզի նրա արօրը անգործ չմնայ:

Գիւղացու ոչխարների հոտերին եւ նրա անասունների նախիրին նայելով, կարելի է նրա տնտեսական ապահովութեան մասին գաղափար կազմել, կարելի է նրա հարստութեան չափը իմանալ: Մի ամբողջ ժամ անասունները գալիս էին ու գալիս, բայց դեռ վերջ չկար: Ես աւելի համոզոեցայ, որ այդ գիւղացիք նիւթապէս ապահոված մարդիկ են, երբ ռեսը ասաց.

— Այդ դեռ մեր անասունների մի մասն է միայն, իսկ մեծ մասը պահւում է հեռաւոր արօտավայրերում. նրանց գիւղը կը բերեն ձմեռը միայն:

Անասուններից յետոյ խումբ-խումբ վերադառնում էին բանոորները դաշտային մշակութիւններից. վերադառնում էր հնձորը խոտհունձից, երկար գերանդին ուսին դրած, վերադառնում էր հերկավարը, իր արօրը կամ գութանը առջեւը ձգած, վերադառնում էր սայլաւարը՝ լծած եզները կամ գոմէշները քշելով: Ամէնքը ուրախ էին, ամէնքի դէմքի վրայ նշմարւում էր անսահման գոհունակութիւն: Ամէնքը երգում էին, որպէս զինոորներ, որ վերադառնում են յաղթութեան դաշտից եւ մի նոր քաղաք են մտնում: Բայց դրանք արեան հետ գործ չունէին, դրանք բնութեան եւ մայր երկրի հետ մաքառող զինոորներ էին: Որքան մօտենում էին գիւղին, երգերի ձայնը այնքան անուշ էր հնչում: Ո՞վ է իմանում սրտերի գաղտնիքը, գուցէ երգողը մի պաշտելի ունէր, որ այդ ոոպէում, աղբիւրի մօտ կանգնած, ջրի սափորը մի կողմը դրած, խորին զմայլմունքով լսում էր ծանօթ ձայնը: Թո՛ղ այդ լսողը նրա կինը լինէր, նրա նշանածը լինէր, կամ նրա սիրուհին լինէր, այդ միեւնոյն է, բաւական է, որ երգողը գիտէր, մի սիրող սիրտ անհամբերութեամբ սպասում է նրա վերադարձին, որի կուրծքի վրայ նա կարող էր հանգչել օրոայ աշխա-